ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ЗАО "ЕРЕВАНТРАНС"

ք. Երևան, Լենինգրադյան 16
☎ (010)390244

N. 2-1498 «05» 03 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով գնման
ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում «Երևանտրանս» ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքը:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Լենինգրադյան 16, Ա.Սահակյանին, մինչև 2015թ. մարտի 19-ը, ժամը 10:30-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարչական շենքում, ք. Երևան, Լենինգրադյան 16 հասցեով 2015թ. մարտի 19-ին, ժամը 10:30-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է' «ԵՔԵՏ-ՇՀԱՊՁԲ-11/11-1»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Տնօրեն Մ.Համբարձումյան

Կատ. Ե.Խաչիբաբյան